



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ ԵՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱԶԳ. ՄԱՐԻ ԳԱՊԱՅԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ



Ուրբաթ, 27
Օգոստոսը իբրև
յիշատակելի թուական
արձանագրուեցաւ մեր
Թեմի ու Ազգային
Վարժարաններու
տարեգրութեան մէջ,
որովհետեւ այդ օրը, տեղի
ունեցաւ Ազգ. Մարի
Գապայեան
Նախակրթարանի
պաշտօնական բացումն ու
անուանակոչութեան

հանդիսութիւնը:

Ծանօթ է, որ Տէր եւ Տիկին Տոքթ. Վաչէ եւ Շուշիկ Գապայեան ամուլը պատրաստակամութիւն յայտնած էր դառնալու Ազգ. Ֆերահեան վարժարանի նախակրթարանի բաժինին բարերարը. այս մասին, Առաջնորդ Սրբազանը իր գոհունակութիւնը արտայայտող յայտարարութիւն մը կատարած էր տարեսկիզբին, Ս. Ծննդեան ընթրիքին առիթով, նշելով, որ բարերար ամուլը 500,000 տոլարի նուիրատութիւն կատարած է վարժարանին, որուն նախակրթարանը կ'անուանակոչուի բարերարներուն հանգուցեալ մօր՝ Մարի Գապայեանի անունով:

Ուսումնական 2010-2011 տարեշրջանի վերամուտին զուգահիշող պաշտօնական այս հանդիսութիւնը սկսաւ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան եւ սրտի խօսքով, ապա կատարուեցաւ վարժարանի անուանակոչութիւնը, ներկայութեամբ վարժարանի տնօրէն Տիար Ժան Գոսաքեանի, բարերարներ՝ Տէր եւ Տիկին Վաչէ Գապայեանի, Ազգային Վարչութեան, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի, վարժարանի Ուսումնական Մարմինի ներկայացուցիչներու, ծնողներու եւ այլ բարեկամներու: Կատարուեցաւ նոր ցուցատախտակին բացումը, ժապաւենի հատում եւ աղի ու ջուրի օրհնութեամբ՝ տնօրինէքի

արարողութիւն: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանար Ս. Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Խօսք առին Առաջնորդ Սրբազանը, վարժարանի տնօրէնը, բարերարը եւ ներկայացուցչական դէմքեր:

Տնօրէնը՝ Տիար Ժ. Գոսաքեան, ողջունեց ներկաները, գոհունակութիւն արտայայտեց այս իրագործումին համար եւ խօսեցաւ Ֆերահեան վարժարանի արձանագրած նուաճումներուն մասին, վեր առնելով ուսումնական ու աշակերտական յաջողութիւնները:

Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինին անունով խօսք առաւ Տիկին Սօսի Յովսէփեան. ան յատկապէս շնորհակալութեան խօսք ուղղեց բարերարներուն ու շնորհաւորեց վարժարանին անուանակոչութիւնը:

Վարժարանին Ուսումնական Մարմինին անունով խօսք առաւ Տիար Րաֆֆի Գույումճեան: Նշելով, որ նախակրթարանին աշակերտները ունին նոր համազգեստներ, ան նկատել տուաւ, որ անոնք իրենց սիրտերուն վրայ պիտի կրեն վարժարանին նշանակը: Ան նաեւ վեր առաւ հայ դպրոցին դերը՝ ընդդէմ սպիտակ ջարդին:

Առաջնորդ Սրբազանը խոր գոհունակութիւն արտայայտեց այս իրագործումին համար, ողջունեց բարերարները ու յատուկ յիշատակութիւն կատարեց Տոքթ. Վաչէ Գապայեանի հանգուցեալ մօր մասին, շեշտելով, որ այս վարժարանն ալ, ինչպէս հայկական բոլոր դպրոցները, լծուած են հայապահպանումի ու մարդակերտումի առաքելութեան:

Երախտիքի խօսք արտասանեց նաեւ Տոքթ. Վաչէ Գապայեան: Ան յիշեց, որ կանուխ տարիքէն կորսնցուցած էր իր հայրը, հետեւաբար երախտագիտութեան խոր զգացումներ ունի զինք հոգացած ու իր աճումը ապահոված մօր հանդէպ. ան ունեցած է երազ մը՝ գործնապէս արտայայտելու իր այդ զգացումները, եւ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան, որոնք ընդառաջած են իր փափաքին ու իրականութեան հասցուցած՝ իր այդ երազը:

Պաշտօնական արարողութեան ընթացքին, բարերարներուն իբրեւ յուշանուէր յանձնուեցաւ նախակրթարանին նոր նշանակը, որ կը կրէ նուիրատուին հանգուցեալ մօր անունը՝ Մարի Գապայեան:

Աշակերտները պատրաստած էին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ հայկական երգերով ու պարերով: Այնուհետեւ, ներկաները հիւրընկալուեցան վարժարանի «Մինասեան» սրահին մէջ, ապա, այցելեցին դասարանները, ուր ճամբայ ելած էր ուսումնական նոր տարեշրջանը:

OFFICIAL OPENING AND RENAMING DEDICATION CEREMONY OF HOLY MARTYRS MARIE CABAYAN ELEMENTARY SCHOOL

On Friday, August 27th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the opening and renaming dedication ceremony of Holy Martyrs Marie Cabayan Elementary School. He was accompanied by Pastor of Holy Martyrs Church Rev. Fr. Razmig Khatchadourian.

As reported previously, and as announced by the Prelate during this year's Christmas Dinner, Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan donated \$500,000 to the school in memory of their mother Marie Cabayan.



The ceremony, which coincided with the commencement of the 2010-2011 school year, began with the Prelate conveying his blessings and well wishes. Participating in the ceremony were Principal Mr. John Kossakian, benefactors Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan, representatives of the Executive Council, Board of Regents and School Board,

parents, and friends. The ceremony encompassed the unveiling of the new school sign and the cutting of the ribbon by the benefactors, and the blessing of salt and water by the Prelate.

Principal Mr. Kossakian welcomed all those in attendance, and expressed his joy and pride on this occasion and for all the successes of the school.

On behalf of the Board of Regents, Mrs. Sossi Hovsepien thanked the benefactors and congratulated the school administration.

School Board Chair Mr. Raffi Kuyumjian also delivered his remarks, in which he exalted the role of the Armenian School.

The Prelate saluted the benefactors, expressing gratitude to them, paid tribute to Dr. Cabayan's mother, and stressed that this school, like all Armenian Schools, is deeply committed to preserving and fostering the Armenian heritage and building character in our youth.

Dr. Cabayan was then invited to convey his thoughts and remarks on this occasion. Dr. Cabayan spoke of how he lost his father at a young age and expressed his gratitude to his mother who was left to raise him singlehandedly. He said that it was his dream to honor his mother in some way, and thanked the Prelate and school administration for making that dream a reality.

As a token of appreciation, the benefactors were then presented with the school's new logo which bears the name of the their late mother Marie Cabayan.

A cultural program of songs and dances was presented by the students, followed by a reception at the school's "Minassian" Hall. The day concluded with a visit to the classrooms which were already in session.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Շաբաթ, 4 Սեպտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հանդիսապետութեամբ, Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Փասատիկայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քիւնյ. Պապօշեան:

Կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու արարողութեան:

DIVINE LITURGY AT THE PRELACY CHAPEL

On Saturday, September 4th, 2010, Divine Liturgy will be celebrated at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

Pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The service begins at 6:00 p.m.

ՎԵՐԱՄՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ



Անցեալ շաբթուան ընթացքին, կարգ մը Ազգային վարժարաններ վերաբացին իրենց դուռները եւ ուսումնական 2010-2011 տարեշրջանը սկիզբ առաւ՝ համաձայն հայկական մեր ականդութեանց, աղօթքով ու մեր հոգեմտաւոր հարստութեանց հաւատարմութեան ուխտին վերանորոգումով:

Աղօթքի պահը առաջնորդեցին մեր

հոգեւոր հայրերն ու եկեղեցիներու հոգեւոր հովիւները, եւ ընթերցեցին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի յատուկ պատգամը, վերամուտի առիթով, յղուած դպրոցներուն:

Երկուշաբթի, 23 Օգոստոսին, Սան Ֆրանսիսքոյի Գռուզեան Չաքարեան Վասպուրական Ազգային վարժարանի վերամուտն էր: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Յոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Սելոյեան կատարեց բացման աղօթքը եւ յաջողութիւն մաղթեց

աշակերտներուն, կրթական մշակներուն եւ վարժարանի պատասխանատուներուն: Ան նաեւ Առաջնորդ Սրբազանին Յօր օրհնութիւններն ու յաջող տարեշրջանի մը բարեմաղթութիւնները փոխանցեց դաստիարակներուն եւ աշակերտներուն:

Չորեքշաբթի, 25 Օգոստոսին, Օրէն Զաունթիի Արի Կիրակոս Միևասեան Ազգային վարժարանը վերաբացաւ իր դուռները, սկսելու համար ուսումնական իր աշխատանքները: Վարժարանի տնօրէնուհի, Տիկին Գոհար Չահրը արտասանեց բարի գալուստի խօսքը, ապա, հրաւիրեց Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, Արժ. Տ. Յրանդ Ա. Զիւյ. Երեցեանը, որ փոխանցեց Առաջնորդ Սրբազան Յօր օրհնութեան խօսքը եւ իր յաջողութեան մաղթանքերը:

Յինգշաբթի, 26 Օգոստոսին՝ Էնսիւնոյի Ֆերահեան Ազգային Երկրորդական վարժարանի աշակերտները իրենց կարգին վերադարձան դպրոց: Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զիւյ. Խաչատուրեան կատարեց բացման աղօթքը եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազանին պատգամը:

PRELACY SCHOOLS COMMENCE NEW ACADEMIC YEAR



This past week, a number of Prelacy School commenced the 2010-2011 academic year, with the remaining schools to reopen in the coming weeks.

Each year, the start of the new school year is observed with traditional opening ceremonies and prayers led by our pastors.

Krouzian-Zekarian-Vasbouragan School in San Francisco opened its doors

on Monday, August 23rd. Pastor of St. Gregory Church Very Rev. Fr. Vaghinag Meloian conducted the opening prayer and read the Prelate's letter of blessing to the administration and students.

A.G. Minassian School of Orange County commenced the school year on Wednesday ,August 25th. Acting Principal Mrs. Kohar-Zaher delivered the opening remarks and invited Pastor of Forty Martyrs Church Archpriest Fr. Hrant Yeretjian to offer the opening prayer and read the Prelate's letter of blessing.

Ferrahian High School commenced the new school year on Thursday, August 26th. Pastor of Holy Martyrs Church Rev. Fr. Razmig Khatchadourian delivered the opening prayer and conveyed the Prelate's blessings.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ
ԿԵԴՐՈՆԻՆ**



Անցնող
շաբաթասկիզբին, Ազգային
Առաջնորդարան այցելեցին
Լոս Անճելըսի Իրանահայ
Միութեան Կեդրոնական
Վարչութեան
ներկայացուցիչները, որոնք
յայտնեցին Թեմիս
բարեխնամ Առաջնորդ
Բարձր. Տ. Մուշեղ Արք.
Մարտիրոսեանին, թէ
միութեան նորակերտ
կեդրոնին շինարարական
աշխատանքները կը
մօտենան իրենց աւարտին,

ու հրաւիրեցին, որ Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. վարչութեան անդամներ
այցելեն նոր շէնքը:

Այս հրաւերին ընդառաջելով, Չորեքշաբթի, 25 Օգոստոսի առաւօտուն,
Առաջնորդ Սրբազան Յայրը պաշտօնական այցելութիւն մը տուաւ
նորակառոյց կեդրոնը, մօտէն ծանօթանալու եւ ականատես դառնալու
համար տարուող աշխատանքներուն եւ իր օրհնութիւնը բաշխելու:
Առաջնորդ Սրբազան Յօր կ'ընկերանային Ազգ. Առաջնորդարանի
Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Յոգշ. Տ.
Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւներէն՝ Արժ. Տ.
Կոմիտաս Բիւյ. Թորոսեան, Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկին
Ռիմա Պողոսեան, գանձապահ՝ Տիար Թորոս Բեչեճեան եւ անդամներ՝
Տեարք Լեւոն Կիրակոսեան եւ Կարէն Բենեասեան:

Առաջնորդ Սրբազան Յայրը նորակառոյց կեդրոնի մուտքին
դիմաւորեցին Կեդրոնական Վարչութեան ատենապետուհին՝ Տիկին
Պերճուհի Ղեւեան, եւ Իրանահայ Միութեան Խնամակալ Մարմինի
նախագահ՝ Տոքթ. Վահան Գրեգոր եւ Կեդրոնական Վարչութեան
անդամները:

Առաջնորդ Սրբազան Յայրը նախ կատարեց նորակերտ Կեդրոնի
օրհնութեան արարողութիւնը, ապա աղօթեց ու մաղթեց, որ Ամենաբարին
Աստուած ինք իր առաջնորդութեամբ բարուք աւարտին հասցնէ այս
կառոյցին շինութիւնը, եւ օրհնէ բոլոր երախտաւորներուն կեանքերը:
Առաջնորդ Սրբազանը նաեւ Ազգ. Առաջնորդարանի Մատուռը պատկերող
յուշանուէր մը յանձնեց Կեդրոնական Վարչութեան ատենապետուհիին:

Կեդրոնական Վարչութեան անդամները ընդհանուր գիծերու մէջ
Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին իրենց աշխատանքի դաշտերն ու
անմիջական ծրագիրները, եւ մօտէն ծանօթացուցին կառոյցին ներքին
բաժանմունքները:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Իրանահայ Միութեան տարած գործունեութիւնը, մանաւանդ հայկական ասանդներուն անոնց հաւատարմութիւնն ու հայկական արժէքներու պահպանման նախանձախնդրութիւնը, օրհնեց իրենց աշխատանքը եւ բարի երթ մաղթեց վարչութեան եւ գործակիցներուն:

Ապա տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ողջոյնի, շնորհակալական ու երախտագիտական խօսքեր արտասանեցին Իրանահայ Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետուհին՝ Տիկին Պերճուհի Ղեւեան, ինսամակալութեան անդամներ՝ Տոքթ. Վահան Գրեգորն ու Թոմիկ Ալեքսանեանը: Անոնք ողջունեցին Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Վարչութեան անդամներու ներկայութիւնը, հակիրճ կերպով անդրադառնալով միութեան գործունեութեան մասին: Ազգային Վարչութեան անունով շնորհաւորանքի խօսք արտասանեց ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան, որ գնահատանքով ու դրուատիքով արտայայտուեցաւ այս միութեան գործին ու նուիրեալներուն մասին: Աւարտին, Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս ողջունեց միութեան անդամներն ու գործակիցները, շեշտելով՝ թէ Իրանահայ Միութիւնը միշտ ալ եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գուրգուրանքին ու ինսամբին առարկան, իսկ Ազգ. Առաջնորդարանին հետ անոր կապերը եղած են սերտ ու ջերմ: Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս Ազգ. Առաջնորդարանի զօրակցութիւնը յայտնեց Իրանահայ Միութեան, եւ մաղթեց, որ գործակցութիւնը շարունակուի աւելի սերտ կերպով:

PRELATE VISITS NEW CENTER OF THE ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES



On Wednesday, August 25th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian visited the new center of the Armenian Society of Los Angeles to view the progress of the project and convey his blessings. The invitation to visit the center was extended to the Prelate by members of the Armenian Society of Los Angeles during their visit to the Prelacy a week earlier.

The Prelate was accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev. Fr. Gomidas Torossian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and Executive Council members Mr. Toros Kejejian, Mr. Levon Kirakosian, and Mr. Kahren Beniasian.

Upon their arrival, the Prelate and delegation were greeted by the Society's Board of Directors Chair Mrs. Berjouhi Ghevian, Board of Trustees Chair Dr. Vaughn Gregor, and members.

The Prelate blessed the new center, praying for the Lord to guide the project to its completion, and presented Mrs. Ghevian with a memento depicting the Prelacy Chapel.

The members of the Society then gave the Prelate and guests a tour of the building, familiarizing them with the departments that will comprise the new center.

The Prelate conveyed his well wishes to the members, commending their dedication and service to the Armenian community and wishing them success in this project and future endeavors.

During the reception that followed, remarks were delivered by Mrs. Ghevian, Dr. Gregor, and Board of Trustees member Mr. Tomik Alexanian. On behalf of the Prelacy Executive Council, Chairlady Mrs. Rima Boghossian congratulated the organization on their new center, and commended the mission of the Society as well as the dedication of the members to that mission. In his concluding remarks, the Prelate once again congratulated the organization's members on their successes, and noting that the Armenian Society of Los Angeles has had a long history of collaboration with the Catholicosate of Cilicia and the Western Prelacy, expressed the ongoing support of the Prelacy in their mission.
